1918 –1920 ԹԹ. ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՐԱՆՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Մի շարք հեղինակներ, իրենց աշխատություններում հանգամանորեն խոսելով 1918–1920 թթ. Արցախում տեղի ունեցած ժողովրդական համագումարների մասին, փորձել են ըստ արժանվույն գնահատել պատմության մեջ կարևոր դեր խաղացած այդ համագումարները[1]: Ուսումնասիրողները, սակայն, չեն փորձել վեր հանել երկրամասը կառավարած համագումարների պառլամենտական (խորհրդարանական) ձևը և նրա ժողովրդավարությունը:

Հարց է առաջանում. ինչո՞ւ է երկու տարում հրավիրվել 10 համագումար, և որո՞նք են եղել դրա դրդիչ պատճառները: Հանգամանորեն ուսումնասիրելով առկա գրականությունը, արխիվային նյութերն ու հուշագրական փաստերը՝ գալիս ենք այն համոզման, որ յուրաքանչյուր համագումար ունեցել է յուրահատկություններ և գրեթե բոլոր համագումարներն էլ ուղղված են եղել թուրք-ազերիների բռնատիրության դեմ:

1917 թ. դեկտեմբերին, երբ Արցախում ստեղծվել էր Միջկուսակցական բյուրո, որը պետք է կառավարեր երկրամասը, թուրք-ազերիները մասնակցում էին բյուրոյի աշխատանքներին: Սակայն 1918 թ. հունիսի 16-ին, երբ Միջկուսակցական բյուրոն լուծարվում է, նրանք հրաժարվում են մասնակցել երկրամասի կառավարմանը և մուսուլման ազգայնամոլ ուժերի հրահրմամբ լայնորեն հակահայ գործունեություն են ծավալում:

1918 թ. մայիսի վերջին Անդրկովկասի սեյմի լուծարումից հետո Թուրքիայի հովանավորությամբ ստեղծված Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությանն օժանդակելու համար այստեղ են գալիս թուրք բազմաթիվ կոմենդանտներ (պարետներ), որոնք տեղերում կազմակերպում էին ասկյարների (զինվորների) ջոկատներ: Նման պայմաններում Միջկուսակցական բյուրոյի աշխատանքները հանդիպում են լուրջ դժվարությունների: Թուրք-ազերիների առաջ քաշած հարցերը՝ հիմնականում կապված քոչի դրամի,, ինքնապաշտպանության, զենքերի հաշվառման, հանգանակությունների կազմակերպման և այլ և այլ հարցերի հետ, հակասում էին Արցախի ընդհանուր շահերին, որն էլ առաջ էր բերում վիճաբանություններ[2]:

---

[1] *Գ. Հովհաննիսյան. Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1971, Բ. Ուլուբաբյան. Արցախյան գոյապայքարը, Երևան, 1994, Ե. Իշխանյան. Լեռնային Ղարաբաղ 1917–1920, Երևան, 1996, Հ. Հարությունյան. Լեռնային Ղարաբաղը 1918–1921 թթ., Երևան, 1996, Հ. Աբրահամյան. Մարտնչող Արցախը 1917–2000, գիրք Ա, Երևան, 2003, Հ. Թումյան. Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917–1920, Երևան, 2008, Ա. Կիսիբեկյան. Հուշեր, գիրք 1 և 2, Երևան, 2011 և այլն:*

[2] *Հ. Աբրահամյան. նշվ. աշխ., էջ 35:*

Կտրվում է Արցախի կապը Գանձակի, Բաքվի և Զանգեզուրի հետ: Թուրքերը փակել էին ճանապարհները, և Արցախը բացահայտորեն գտնվում էր շրջափակման մեջ: Երկրամասում ստեղծվել էր մի այնպիսի իրավիճակ, երբ անհրաժեշտություն զգացվեց անհապաղ հրավիրել բնակչության շրջանային համագումարներ: Դրանք տեղի ունեցան 1918 թ. ապրիլ-մայիս ամիսներին: Արցախի թեմի առաջնորդ Վահան արքեպիսկոպոս Տեր-Գրիգորյանի հանձնարարությամբ այդ համագումարները՝ «պետք է աչալուրջ լինեն, դրված ծանրակշիռ խնդիրը լուծելիս և ջանան այնպիսի որոշում կայացնել, որ չխախտի խաղաղությունը և չվնասվի մեր ժողովուրդը»[3]:

Երկրամասի կառավարումը դյուրացնելու համար Միջկուսակցական բյուրոյի որոշմամբ այն բաժանվեց վարչական երկու շրջանի, որոնցում գլխավոր լիազորներ նշանակվեցին Խաչեն-Ջրաբերդ-Գյուլիստանում՝ Եղիշե Իշխանյանը և Վարանդա-Դիզակում՝ Արսո Հովհաննիսյանը:

Արցախում գործող տաճիկ կոմենդանտներն ամեն կերպ սրում էին հարաբերությունները հայ և մուսուլման ժողովուրդների միջև: 1918 թ. հունիսի կեսերին Միջկուսակցական բյուրոյի լուծարումը դարձել էր հրամայական[4]: Այդ ժամանակ Շուշիում գործող թե՛ Միջկուսակցական բյուրոն, թե՛ Մուսուլմանական Ազգային կոմիտեն և թե՛ Հայ-թուրքական միջազգային կոմիտեն չունեին «ընդհանուր ճանաչում և հեղինակություն»[5]: Մի կողմից տաճիկ կոմենդանտների սանձարձակ գործունեությունը, մյուս կողմից էլ այս երեք մարմինների անկարողությունը Միջկուսակցական բյուրոյին ստիպեց վերակառուցել իր աշխատանքները: Հունիսի 15–17-ը տեղի ունեցած բյուրոյի հավաքը լուծարում է այն և ստեղծում «Հայ հեղափոխական կուսակցությունների և կազմակերպությունների կոմիսարների խորհուրդ»[6]: Ասել է թե՝ Միջկուսակցական բյուրոն, որը մինչ այդ հրաժարվում էր կառավարական գործառույթներ իրագործելուց, հիմա դառնում է Կոմիսարների խորհուրդ՝ իր նախագահով, վեց կոմիսարներով և քարտուղարով[7]: Դա Արցախի ժողովրդավարական առաջին կառավարությունն էր: Միջկուսակցական բյուրոն այլ ելք չուներ. նա, փաստորեն, Մուսուլմանական Ազգային և Հայ-թուրքական միջազգային կոմիտեներին դրեց կատարված փաստի առաջ: Այդ պայմաններում «նման ... կառավարության կազմելը և համատեղ ուժերով երկրամասի ղեկավարումը, նրա ինքնապաշտպանության ամրապնդումն ու ժողովրդավարության զարգացումը միակ ընդունելի քայլն էր»[8]:

Այսպիսով՝ 1918 թ. հունիսի կեսերին Արցախում հիմք դրվեց երկրամասի ժողովրդավարական կառավարմանը: Արցախի նորաստեղծ կառավարությունը հսկողություն սահմանեց քոչի վրա (որպեսզի չփչացնեն գյուղացիների ցանքսերն ու այգիները) , որոշեց դեռևս հունվարին Թիֆլիսում կազմակերպված և Գորիս հասած Շուշիի գունդը տեղափոխել Շուշի, վերականգնել

---

[3] *Տե՛ս Ե. Իշխանյան. նշվ. աշխ., էջ 141:*
[4] *Հ. Հարությունյան. նշվ. աշխ., էջ 19:*
[5] *Նույն տեղում, էջ 21:*
[6] *«Հայրենիք» (Բոստոն), 1933, թ. 11, էջ 85:*
[7] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 221, ց. 1, գ. 30, թ. 26:*
[8] *Հ. Աբրահամյան. նշվ. աշխ., էջ 48:*

Շուշի-Գորիս փոստ-հեռագրական ընդհատված կապը, կապ հաստատել Բաքվի կոմունայի և Խորհրդային Ռուսաստանի հետ, անկորուստ կազմակերպել բերքահավաքը, ամրապնդել տեղական իշխանություններն ու երկրամասի ինքնապաշտպանությունը և լուծել կենսական նշանակություն ունեցող այլ հարցեր:

Արցախի կառավարության կարևոր խնդիրներից էր արցախահայության առաջին համագումարի հրավիրումը: Հուլիսի առաջին կեսին տեղի ունեցած շրջանային համագումարներում ընտրվում են համագումարի (պառլամենտի) պատգամավորները, ըստ որում՝ գյուղական ամեն մի համայնքից երկուական պատգամավոր: Ութ պատգամավոր ընտրվում են Շուշի քաղաքի բնակչությունից, երկուական պատգամավոր էլ՝ հինգ կուսակցություններից (դաշնակցություն, բոլշևիկներ, մենշևիկներ, էսէռներ և կադետներ): Ընդամենն ընտրվում է 60 հոգի[9], որի մեծամասնությունը հասարակ գյուղացիներ էին, մտավորականներ, արհեստավորներ:

Արցախահայության առաջին համագումարը տեղի է ունեցել հուլիսի 22–26-ը Շուշիի թեմական դպրոցի դահլիճում[10]: Սկզբում նախագահում էր բոլշևիկ Ալեքսանդր Ծատուրյանը: Առաջին նիստից հետո, սակայն, առանց որևէ պատճառաբանության, նա հրաժարվում է նախագահել: Նոր նախագահ է ընտրվում էսէռ Արսեն Հովհաննիսյանը (Արսո Բաղդասարյան): Համագումարը քննարկում է հետևյալ հարցերը. 1. բյուրոյի և Կոմիսարների խորհրդի հաշվետվությունները, 2. պարենավորման խնդիրը, 3. հարկահանության հարցը, 4. դատարանների հարցը, 5. արտաքին հարաբերությունների մասին, 6. Ղարաբաղը որպես Արարատյան Հանրապետության անբաժան մաս, 7. ինքնապաշտպանության խնդիրը և 8. ընտրություններ: Համագումարն Արցախը հայտարարում է անկախ քաղաքական միավոր, ընտրում է Ղարաբաղի ազգային խորհուրդ, յոթ հոգուց բաղկացած կառավարություն, որն իրագործելու էր օրենսդիր և գործադիր ֆունկցիաներ: Դա նորություն էր, երբ ընտրովի պետական միևնույն մարմինը կարող էր և՛ ընդունել օրենքներ և՛ նպաստել դրանց կատարմանը: Համագումարի ընդունած որոշումները մեծ տհաճություն են պատճառում «թուրք-մուսավաթականներին»[11]:

Համագումարի որոշումով գյուղական հասարակություններին թույլատրվում էր կատարել բեգական հողերի բռնագրավում[12]: Ադրբեջանին միանալու հարցի վերաբերյալ համագումարը միաձայն որոշում է. «Ղարաբաղը Արարատյան Հանրապետության մասն է կազմում, թեև տիրող պայմանների շնորհիվ կտրված է նրանից, սակայն պիտի ջանալ կապ հաստատել ու կցվել նրան»: Նաև հայտարարում է, որ Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը «պիտի ունենա երկիրը կառավարելու բոլոր իրավունքները,

---

[9] *Ե. Իշխանյան. նշվ. աշխ., էջ 172:*

[10] *Համագումարի աշխատանքներին խորհրդակցական ձայնով մասնակցել են նաև Միջկուսակցական բյուրոյի անդամները և մի քանի այլ հրավիրվածներ: Ըստ Ե. Իշխանյանի՝ համագումարին մասնակցել են 60 հոգի (տե՛ս Ե. Իշխանյան. նշվ. աշխ., էջ 172), իսկ ըստ Հ. Թումանի՝ 180 (տե՛ս Հ. Թումյան. նշվ. աշխ., էջ 104): Մեր հաշվումներով համագումարին մասնակցել են շուրջ 70 հոգի:*

[11] *«Մշակ» (Թիֆլիս), 23. 02. 1919:*

[12] *Հ. Թումյան. նշվ. աշխ., էջ 104:*

մինչև կցումը Հայաստանի Հանրապետությանը»[13]: Համագումարի ընդունած բոլոր որոշումները, ինչպես և հուլիսի 24-ին Ղարաբաղի ժողովրդական կառավարության հայտարարությունը (հռչակագիր) իրենց էությամբ ամբողջովին ժողովրդավարական էին:

Համագումարի աշխատանքներին մասնակցող Գետաշենի ներկայացուցիչները նորընտիր կառավարությանը խնդրում են տեսադաշտից դուրս չթողնել նախկին Գյուլիստանի գավառը (որը կազմել է պատմական Արցախ-Ղարաբաղի անբաժան մասը), մոռացության չտալ այնտեղ ապրող հայ գյուղացիության կարիքները, նրանց թշվառ և անապահով վիճակը: Համագումարից մի քանի օր անց՝ օգոստոսի 2-ին, Ղարաբաղի կառավարությունը որոշում է Գանձակի գավառի հայկական շրջանները հայտարարել Արցախին միավորված[14]: Այդ որոշումն աղմուկ-աղաղակով է ընդունվում Գանձակում նստած Դեմոկրատական Ադրբեջանի թուրք-մուսավաթական իշխանության և այնտեղ գտնվող տաճկական ուժերի հրամանատար Նուրի փաշայի կողմից: Վերջինս շարունակում էր օսմանյան նորանոր ուժեր կենտրոնացնել Գանձակում և արցախահայությունից պահանջում էր անվերապահորեն ենթարկվել ադրբեջանական իշխանությանը:

Համագումարի պատգամավորները միաբերան հայտարարում են, որ «երբ հնչի ահազանգը, ժողովուրդը պատրաստ է և լի վճռականությամբ մի մարդու պես ելնելու թուրքի դեմ պաշտպանելու իր երկրի անկախությունը, իր կյանքն ու պատիվը»[15]: Համագումարը, նկատի ունենալով պատմական պահի հրամայական պահանջը, որոշում է «ղեկավարվել անցյալում կիրառված կոալիցիայի միակ ճիշտ սկզբունքով՝ կառավարություն կազմելով անխտիր այն բոլոր քաղաքական հոսանքների ներկայացուցիչներից, որոնք կենսականորեն շահագրգռված են հայ ժողովրդի ճակատագրով և պատրաստ են այդ լուրջ պատմական մոմենտին միացնելու իրենց ջանքերը՝ երկիրը վերահաս աղետներից փրկելու համար»[16]:

Նորակազմ կառավարության ութ բաժիններից դաշնակցությունն ուներ 4 տեղ, մենշևիկները՝2, էսէռները՝1 և անկուսակցականները՝1[17]: Նորընտիր կառավարությունը գործում էր թափով՝ստանալով երկրամասի հայության ամենաջերմ աջակցությունը: Կառավարությունը երկրամասի բնակչությունից ստանում է «հավատարմության և նվիրվածության հավաստիք»: Սակայն Արցախի երկնակամարում շարունակվում էին սև ամպեր կուտակվել:

Նկատենք,որ այդ ժամանակաշրջանում Արցախ–Ղարաբաղը գտնվում էր չափազանց ծանր պայմաններում. 3500 տաճկահայ գաղթականներ Արցախի ճանապարհին Զարիսլուի մոտ օղակվել էին թուրք ավազակների կողմից, 5000 գաղթականներ Շուշի էին գաղթել Ղարաղշլաղից (Բերդաձորից):

---

[13] *Ե. Իշխանյան. նշվ. աշխ., էջ 174:*

[14] *Ա. Կիսիբեկյան. նշվ. աշխ., էջ 331:*

[15] *Հ. Թումյան. նշվ. աշխ., էջ 103:*

[16] *Նույն տեղում:*

[17] *Կառավարությունը, համագումարի որոշումով, իրավունք ուներ կոոպտացիոն կարգով ստեղծել նոր բաժիններ և նշանակել կառավարիչներ (նախարարներ):*

Պետք էր հոգալ նրանց մասին, միաժամանակ պայքարել թուրք ավազակախմբերի դեմ, վերականգնել կապերը Բաքվի, Գորիսի և Գանձակի հետ, նպաստել արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնմանը, կարգավորել գյուղական, լուսավորչական և ճանապարհաշինական աշխատանքները: Մի խոսքով՝ ճգնաժամի մեջ գտնվող երկրամասն այդ վիհից դուրս բերելու համար պետք էր ձեռնարկել համարձակ քայլեր: Կառավարության նախագահ Եղիշե Իշխանյանն անում էր անհնարինը: Ամենից առաջ անհրաժեշտ էր բերդաձորցիներին (դարաղշլաղցիներին) վերադարձնել իրենց բնակավայրերը: Օգոստոսին և սեպտեմբերի սկզբին կազմակերպվել էին շրջանային ինքնապաշտպանական ուժեր, որոնք զինամթերքի խիստ կարիք ունեին: Մոտավոր հաշվումներով՝ Արցախն այդ ժամանակ կարող էր մարտի դուրս բերել 20 հազար զինվոր, սակայն եղած փամփուշտը հազիվ կարող էր հերիքել մեկ-երկու օր: Ուրեմն՝ կառավարությունը պետք է հոգար նաև այդ հարցի մասին, որն անչափ կարևոր էր:

Հենց այդ օրերին է, որ թուրք հրամանատարությունը վերջնագիր ներկայացրեց Ղարաբաղի կառավարությանը՝ ենթարկվել Ադրբեջանին: Քանի որ Արցախում կարգ էր՝ երկրամասի հետ առնչվող բոլոր հարցերը վճռել ժողովրդավարական որոշումներով, ուստի թուրք հրամանատարությանը պատասխանելու համար անհրաժեշտ էր հրավիրել արցախահայության նոր համագումար: Այն տեղի է ունեցել 1918 թ. սեպտեմբերի 8–10-ը՝ Շուշիի ռեալական ուսումնարանի դահլիճում: Համագումար էին ներկայացել գյուղական 22 հասարակություններից 3-ական պատգամավոր, Շուշի քաղաքից՝ 10, տաճկահայ գաղթականներից՝ 3, դարաղշլաղցիներից՝ 3, կուսակցություններից՝ 10 (ընդամենը՝ 92 հոգի): Համագումարի աշխատանքներին մասնակցում են նաև կառավարության 9 անդամ: Այսպիսով՝ արցախահայության երկրորդ համագումարին ներկա էին 101 հոգի: Արագորեն հրավիրված նոր պառլամենտը քննարկում է թուրքական հրամանատարության վերջնագրին տրվելիք պատասխանը, դարաղշլաղցիներին հայրենի բնակավայրեր վերադարձնելու խնդիրը և Ղարաբաղի կառավարության զեկուցումն ու անվանափոխության հարցերը: Կառավարությունը ներկայացնում է իր հրաժարականը, որը, սակայն, չի ընդունվում: Առաջարկվում է կառավարության անունը փոխել և այն լրացնել հինգ անձով: Ընտրվում է Ազգային խորհուրդ, որից դաշնակցական՝ 5, չեզոք՝ 1, էսէռ՝ 1, մենշևիկ՝ 2[18]:

Սեպտեմբերի 10-ին տեղի է ունենում աշխատանքի բաժանում. նախ ստեղծվում է Ազգային խորհրդի դիվան, ապա ընտրվում է 9 հոգուց բաղկացած կառավարություն (նախագահ, քարտուղար, ֆինանսների, արդարադատության, զինվորական, լուսավորության, գաղթականության, խնամատարության և արտաքին գործերի կոմիսարներ)[19]: Համագումարը, ընդառաջ գնալով Գանձակի շրջանի հայության խնդրանքին, հաստատում է այդ բնակավայրերը Արցախին միացնելու նախորդ հայտարարությունը:

---

[18] *Ե. Իշխանյան. նշվ. աշխ., էջ 203:*
[19] *Նույն տեղում:*

1918 թ. սեպտեմբերի 15–17-ը Բաքվում ավելի քան 30 հազար հայերի կոտորածը, Ադրբեջանի մուսավաթական կառավարությանը ենթարկվելու թուրքական հրամանատարության պահանջը, Արցախ թուրքական զորք մտցնելու թուրք հրամանատարության որոշումը ոտքի էր հանել երկրամասի ողջ հայությանը: Արցախահայությունը ստիպված էր հրավիրել նոր՝ երրորդ արտահերթ համագումար, որը տեղի ունեցավ սեպտեմբերի 18–22-ը՝ Շուշիի ռեալական ուսումնարանի դահլիճում:

Թե՛ համագումարին մասնակցելու համար ընտրված պառլամենտականները և թե՛ համագումար եկած կամավորները, մոտ 700 հոգի, զինված էին ու պատրաստ համագումարից անմիջապես մեկնել մարտի: Նրանք կոչ էին անում մերժել թուրքական հրամանատարության պահանջը: Քանի որ հնարավոր չէր նման պայմաններում շարունակել համագումարի աշխատանքները, հարկ եղավ ավելի քան 300 հոգի հեռացնել դահլիճից: Արցախի ժողովրդական պառլամենտը ելք էր որոնում: Ելույթ ունեցած 78 հռետորներից և ոչ մեկը չէր ցանկանում դավաճանել ժողովրդին[20]: Ի վերջո, կառավարությունը համագումարին առաջարկում է թույլ տալ թուրքական մի ջոկատ, մոտ 1000 հոգի, մտնել Շուշի: Արցախի կառավարությունը միաժամանակ գաղտնի որոշում է ընդունում որքան հնարավոր է ձգձգել թուրքական վերջնագրի պատասխանը[21]: Համագումարը, լսելով կառավարության նախագահ Ե. Իշխանյանի զեկուցումը թուրքական հրամանատարության ներկայացրած վերջնագրի նախագծի մասին, ծափահարություններով է ընդունում զինադադարության և Ադրբեջանի իշխանությանը ենթարկվելու վերջնագրին ժխտողական պատասխան տալու առաջարկությունը, սակայն երբ նախագահը խոսում է Շուշի թուրքական զորք մտնելու հնարավորության մասին, դահլիճը վայրկենապես փոթորկվում է: Այնուամենայնիվ, թուրք հրամանատարությունը չի ճանաչում Արցախի հայկական կառավարությանը, պատճառաբանելով, թե Թուրքիան ճանաչում է միայն Հայաստանի հայկական կառավարությանը: Նուրի փաշան համաձայնվում է չխախտել Ղարաբաղի status quo-ն, մինչև Կոստանդնուպոլսի կոնֆերանսի որոշումը Անդրկովկասի հանրապետությունների սահմանների վերաբերյալ: Ընդառաջելով հայերի պահանջին՝ նա խոստանում է նաև «զարափափխներ» չմտցնել Շուշի: Սակայն թուրքերը չկատարեցին իրենց խոստումը, 1000-ի փոխարեն Շուշի մտցրին 2–3 հազար ասկյար, Ասկերանից Շուշի ճանապարհի երկու կողմերի հայկական բնակավայրերը ենթարկեցին ռմբակոծությունների, զորք մտցրին Ջրաբերդի և Վարանդայի շրջաններ: Երկու դեպքում էլ թուրքական ուժերը ջախջախվեցին Ղարաբաղի ինքնապաշտպանական ջոկատների կողմից: Թուրք հրամանատարության հրամանով Շուշիում ձերբակալվեցին 50–60 մտավորականներ և հասարակական-քաղաքական գործիչներ ու նետվեցին բանտ, որտեղ ենթարկվեցին կտտանքների[22]:

Առաջին աշխարհամարտում պարտություն կրած Թուրքիան, ի վերջո, ստիպված էր նոյեմբերի վերջին հեռանալ Անդրկովկասից:Արցախից հեռանալուց

---

[20] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 43, թ. 94:*

[21] *Հ. Թ ո ւ մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 157:*

[22] *Նույն տեղում, էջ 65:*

հետո նրանց փոխարինեցին անգլիացիները, որոնք 7 ամիս մնալով Ղարաբաղում՝ փորձում էին բռնաճնշումների միջոցով երկրամասը ենթարկել մուսավաթական Ադրբեջանին: Թե՛ Բաքվում նստած անգլիական զորքերի հրամանատար գեներալ Վ. Թոմսոնը, թե՛ նրան հաջորդած գնդապետ Գ. Շատելվորտը պատրաստ էին Արցախը բնաջնջել, միայն թե այն ենթարկեցնեին Ադրբեջանին: Արցախահայությունն արդեն զրկված լինելով պառլամենտական կառավարումից՝ պայմաններ էին որոնում երկրամասում վերականգնել ժողովրդավարական իշխանությունը: Նրանք իրենց հույսերը կապում էին այդ ժամանակ Զանգեզուրում գտնվող զորավար Անդրանիկի հետ: Անգլիական հրամանատարությունը, խորամանկ քաղաքականություն վարելով, շուտով Ղարաբաղում ստեղծում է նահանգապետություն, և նահանգապետ է նշանակվում ազգությամբ քուրդ, մասնագիտությամբ՝ բժիշկ, մուսավաթ, հայատյաց, ազգայնամոլ Խոսրով բեկ Սուլթանովը: 1919 թ. փետրվարի սկզբին նա զորքով և 7 մլն ադրբեջանական դրամով մտնում է Շուշի: Սուլթանովը հստակ խնդիր ուներ՝ կաշառել արցախահայերին և ստորագրել տալ մի խայտառակ հայտարարություն, թե, իբր, նրանք Ադրբեջանի մուսավաթական կառավարությանն ընդունում են 1918 թ. մայիսի 27-ից: Սակայն թե՛ Սուլթանովը և թե՛ մուսավաթ պարագլուխները չարաչար սխալվեցին. Արցախում և ոչ մի հայ չստորագրեց քաղաքական այդ անբարո հայտարարությունը:

Անգլիական հրամանատարությանը և նահանգապետ Սուլթանովին պատասխան տալու համար խիստ անհրաժեշտ էր վերականգնել թուրքերի կողմից լուծարված Արցախի կառավարությունը: Դրա համար անհրաժեշտ էր հրավիրել արցախահայության չորրորդ համագումար: Այն տեղի է ունեցել 1919 թ. փետրվարի 10–20-ը՝ Շուշիի թեմական դպրոցի դահլիճում: 22 գյուղական հասարակություններից ընտրվել էին 66, Շուշի քաղաքից՝ 8, հինգ կուսակցություններից՝ 10 պատգամավոր: Համագումարի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող էին մասնակցել գավառների ինքնապաշտպանական զորամասերի հրամանատարներն ու Ազգային խորհրդի անդամները: Փետրվարի 14-ին համագումարը որոշում է ընդունում թույլատրել համագումարի աշխատանքներին մասնակցել Բաքվի Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչներ Գերասիմ Բալայանին, Լևոն Զառաֆյանին, Իշխան Միրզաբեկյանին և Ներսես Նասիբյանին: Համագումարի օրակարգն էր. 1. Ղարաբաղի ժողովրդական կառավարության զեկուցումը, 2. ժամանակավոր ազգային խորհրդի զեկուցումը, 3. ինքնապաշտպանության հարցը, 4. Ղարաբաղը Հայաստանին կցելու հարցը, 5. ֆինանսական հաշվետվություն, 6. վարչական մարմինների կազմակերպում, դատարանների ստեղծում, դպրոցների բացում, 7. հայ-թուրքական հարաբերությունները և 8. ընտրություններ: Օրակարգից երևում է, որ արցախահայության չորրորդ համագումարում քննարկման էին դրված կենսական նշանակություն ունեցող հարցեր: Առանձնապես կարևոր էին օրակարգի 4-րդ և 7-րդ հարցերը, որոնք խիստ գրգռել էին մուսավաթական կառավարությանը:

Արցախին հարկավոր էր սահմանադրություն: Դրա համար չորրորդ համագումարն իր առաջին նիստերից մեկում ընտրում է հանձնաժողով՝ երկրամասի

սահմանադրությունը մշակելու համար: Քննարկելով Արցախի նկատմամբ մուսավաթական Ադրբեջանի ոտնձգությունների հարցը՝ նաև որոշվում է այդ մասին հեռագրել Փարիզի հաշտության վեհաժողովին մասնակցող Հայաստանի Հանրապետության ներկայացուցչությանը: Համագումարը կտրուկ մերժում է Արցախը Ադրբեջանին բռնակցելու մուսավաթականների և անգլիացիների պահանջը: «Կանգնած լինելով ժողովրդի ինքնորոշման սկզբունքի վրա՝ Արցախի հայ ազգաբնակչությունը հարգանքով է վերաբերվում դեպի հարևան թուրք ժողովրդի ինքնորոշման իրավունքը և դրա հետ միաժամանակ կառավարության փորձերի դեմ, որոնցով ցանկանում է ոչնչացնել այդ սկզբունքը հայկական Արցախի նկատմամբ, որը երբեք չի ընդունել և չի ընդունում իր վրա Ադրբեջանի իշխանությունը,– կարդում ենք համագումարի ընդունած բանաձևում:– Համագումարը պնդում է իր իրավունքների պաշտպանության վրա՝ թե Կովկասում գտնվող դաշնակից պետությունների ներկայացուցիչների և թե Եվրոպայի խաղաղարար համագումարի առջև»[23]:

Համագումարի վերջին նիստում ընտրվում է Ղարաբաղի հայոց ազգային խորհուրդ, որի նախագահ է ընտրվում Ասլան Շահնազարյանը, փոխնախագահներ՝ Եղիշե Իշխանյանն ու Հրանտ Բահաթրյանը, քարտուղար՝ Մելիքսեթ Եսայանը: Նորընտիր Ազգային խորհուրդն իր վրա է վերցնում երկրամասը կառավարելու բոլոր ֆունկցիաները: Ազգային խորհուրդը ժողովրդավարական կառավարություն էր բառիս բուն իմաստով: Հետագայում Ե. Իշխանյանը գրել է, որ «միջկուսակցական ժողովներից և թե համագումարներից ընտրված մարմինները կառավարության դեր էին կատարում»[24]:

Ղարաբաղի հայության չորրորդ համագումարը ժողովրդավարության ամենաբնորոշ օրինակ է: Այն վճռեց երկրամասի բնակչության և նորաստեղծ իշխանության՝ Ազգային խորհրդի հիմնական խնդիրներն ու ուղղությունները: Դեռևս համագումարից առաջ Արցախում կազմավորված սպայախումբը լիովին պաշտպանում է համագումարի ընդունած որոշումները և աջակցում նորընտիր Ազգային խորհրդի գործունեությանը:

Չորրորդ համագումարից հետո քաղաքական մթնոլորտը երկրամասում ավելի է շիկանում: Անգլիական հրամանատարությունը հենց համագումարի օրերին Շուշի է մտցնում Հնդկաստանից բերված 400 հոգուց բաղկացած մի զորամաս և տեղավորում քաղաքի հայկական թաղամասում, որպեսզի անհրաժեշտության դեպքում նրանց օգտագործի հայերի դեմ:Անգլիացիները Սուլթանովին շտապեցնում են որքան հնարավոր է շուտ Արցախը ենթարկեցնել Ադրբեջանին: Համագումարի փակման հաջորդ իսկ օրը՝ փետրվարի 21-ին,անգլիական հրամանատարությունը Ղարաբաղի ազգային խորհրդից էլ պահանջում է ճանաչել Ադրբեջանի իշխանությունը և երկրամասի բոլոր հաստատությունները դնել նահանգապետ Սուլթանովի ենթակայության տակ:Անգլիական հրամանատարությունը,սակայն,Արցախի ազգային խորհրդից ստանում է հետևյալ պատասխանը.«Հայտնեցեք մայորին(ի նկատի ունեին այդ ժամանակ Արցա-

[23] *«Մշակ», 16. 03. 1919:*
[24] *«Հայրենիք», 1933, թ. 11, էջ 86:*

խում գտնվող Թոմսոնի ներկայացուցիչ մայոր Մոնկ Մեսընին), որ Ղարաբաղի հայության գերագույն լիազոր ներկայացուցիչները իրենց չորրորդ համագումարում միաձայնությամբ վճռել են չճանաչել Ադրբեջանի իշխանությունը, որ Ղարաբաղը իր հազարամյա պատմական հուշարձաններով և 85 %-ից ավելի հայ ազգաբնակությամբ հանդիսանում է Հայաստանի անբաժան մասը, որպես նրա բնագավառներից մեկը: Համագումարից ընտրված Ազգային Խորհուրդը, իր լրիվ կազմով, և բոլոր շրջանների հրամանատարները, որ ներկա են ու պատասխանատու Ղարաբաղի գերագույն լիազոր օրգանի՝ համագումարի առջև, կանգնած նրա որոշման ու տված հրահանգի վրա, չեն ճանաչում և երբեք չեն կարող ճանաչել Ադրբեջանի գերիշխանությունը»[25]:

Մուսավաթական Ադրբեջանը, ինչպես հայտնի է, բացահայտ ոտնձգություններ էր կատարում ոչ միայն Արցախի, այլև Զանգեզուրի նկատմամբ: Իրենց բողոքը ներկայացնելու համար արցախահայության պատվիրակությունը մեկնեց Բաքու: Հանդիպելով գեներալ Թոմսոնի հետ, ինչպես և սպասելի էր, ստացավ բացասական պատասխան: Անգլիական հրամանատարությունը ճնշում գործադրելով Արցախի ազգային խորհրդի վրա՝ պահանջում է անհապաղ կատարել իր պահանջը: Գեներալ Թոմսոնի հրամանով նույնիսկ թույլ չի տրվում, որ Ազգային խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյանը Բաքվից վերադառնա Արցախ:

Ահա այս պայմաններում անհրաժեշտություն է զգացվում անհապաղ հրավիրել արցախահայության նոր՝ հինգերորդ համագումար: Այն գումարվում է 1919 թ. ապրիլի 23–29-ը, Շուշիի թեմական դպրոցի դահլիճում: Պատգամավորների թիվն այնքան էր, որքան չորրորդ համագումարում: Համագումարին ներկա էին Բաքվում Թոմսոնին փոխարինած գնդապետ Գ. Շատելվորտը, Սուլթանովը, Արցախի թեմի առաջնորդ Վահան արքեպիսկոպոս Տեր-Գրիգորյանը: Համագումարը քննարկում է հետևյալ հարցերը. 1. Ադրբեջանի նահանգապետության հարցը, 2. վարչական մարմնի վերակազմության հարցը, 3. շրջանային խորհուրդների վերակազմումը, 4. դրամական հաշիվներ, 5. Ազգային խորհրդի գործունեության շուրջ զեկուցում, 6. քոչի խնդիրը, 7. Ազգային խորհրդի հրաժարականը և նրա ընտրությունը:

Ինչպես երևում է օրակարգից, այդ օրերին Արցախի համար հիմնական խնդիրը եղել է իշխանությունների ամրապնդման հարցը և նահանգապետության նկատմամբ ունեցած վերաբերմունքը: Արցախահայության համագումարում ճառով հանդես է գալիս նաև Շատելվորտը ու հայտարարում, թե անգլիական հրամանատարության որոշմամբ Ղարաբաղը պետք է ճանաչի Ադրբեջանի իշխանությունը, մինչև կճշտվի Ադրբեջանի և Հայաստանի սահմանների հարցը[26]: Պառլամենտականները խիստ վրդովվում են անգլիական հրամանատարության այդ հայտարարությունից:Ապրիլի 24-ին հանդիպում ունենալով Ազգային խորհրդի նախագահի պաշտոնակատար Եղիշե Իշխանյանի հետ՝ Շատելվորտը փորձում է նրան մեղադրել անգլիական հրամանատարության պահանջն արցախցիների կողմից

[25] *Տե՛ս Ե. Իշխանյան. նշվ. աշխ., էջ 355:*
[26] *«Աշխատավոր» (Թիֆլիս), 20. 05. 1919:*

մերժվելու կապակցությամբ: Ե. Իշխանյանն անգլիական հրամանատարին պատասխանում է, թե համագումարը կատարել է արցախահայության կամքը, ապա ավելացնում է, որ արցախցիները ատելով ատում են ադրբեջանա-թուրքական դահիճներին, որոնք հազարավոր հայերի արյուն են թափել Բաքվում, Ղարաբաղում, Զանգեզուրում և այլ վայրերում[27]: Համագումարը երկրորդ անգամ լսելով անգլիական հրամանատարի պահանջը՝ դարձյալ «միանգամայն անհնարին է գտնում փոխելու իր ժխտական որոշումը, որը թելադրված է Ղարաբաղի ամբողջ հայության անհողդողդ կամքով...», քանի որ «Ադրբեջանը միշտ աջակից և գործակից է եղել Տաճկաստանի կողմից ընդհանրապես հայերի և մասնավորապես Ղարաբաղի հայության դեմ ուղղված զազանություններին, որպեսին մնում է այժմ...»: Ապրիլի 24-ի նիստում Ազգային խորհրդի դիվանի ողջ կազմի և 48 պատգամավորների ստորագրությամբ ընդունված բանաձևում վճռականորեն ասված է. «Համագումարը անընդունելի է համարում Ադրբեջանի հետ առնչություն ունեցող որևէ վարչական ծրագիր»[28]: Խիստ դժգոհ Շատելվորտը հայտարարում է. «Ի նկատի ունեցեք, որ ձեր ճանապարհները կարող են փակել, այն ժամանակ դուք որտեղի՞ց մթերք կստանաք, ինչպե՞ս կպահպանեք հաղորդակցությունը արտաքին աշխարհի հետ: Կարող են ձեզ տնտեսապես բոյկոտ հայտարարել, կարո՞ղ եք առանց հացի ապրել: Եվ եթե հուզված, զինված ամբոխը հարձակվի ձեզ վրա, կարո՞ղ եք պաշտպանվել»[29]: Այդ հարցը տալով, կարծես թե, Շատելվորտը միևնույն ժամանակ թուրք-ազերիներին սովորեցնում էր, թե ինչ պետք է անել Ղարաբաղը հպատակեցնելու համար:

Ժողովրդավարական այդ համագումարից հետո Ղարաբաղի հայության անունից հրապարակվում է մի հայտարարություն, որտեղ ասված է. «Ղարաբաղը ի սկզբանե եղել է Հայաստանի անբաժան մասը, որպես նրա գավառներից մեկը, և որպես այդպիսին, պիտի կցվի Հայաստանին: Մերժել և ոչ մի կերպ չճանաչել Ադրբեջանի իշխանությանը»[30]: Հետագայում Ադրբեջանի մի շարք հեղինակներ[31], խեղաթյուրելով պատմական ճշմարտությունը, գրել են, թե, իբր, «հայ գյուղացիական հինգերորդ համագումարում որոշվել է ճանաչել Խորհրդային Ադրբեջանը և միանալ նրան»: 1919 թ. ի՞նչ - Խորհրդային Ադրբեջանի մասին կարող է խոսք լինել:

Արցախահայության հաջորդ՝ վեցերորդ համագումարը, որ տեղի է ունեցել 1919 թ. հունիսի 28–30-ը Վարանդայի Շոշ գյուղում, որին ներկա էին տարբեր վայրերից ժամանած 500 հոգի, փաստորեն, մնացել է անավարտ:

---

[27] *Ե. Իշ խ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 397–400:*

[28] *ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 26, նաև՝ Ա ր ա մ ա յ ի ս. Ղարաբաղի տագնապը, Երևան, 1993, էջ 18, «Հայրենիք», 1919, № 8, էջ 136 և այլն:*

[29] *Ա ր ա մ ա յ ի ս. նշվ. աշխ., էջ 18:*

[30] *Տե՛ս Ե. Ի շ խ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 403:*

[31] Д. Г у л и е в. Из истории образования Нагорно-Карабахской автономной области.– «Известия Академии наук Азербайджанской ССР». Серия истории, философии и права, 1973, ¹ 3, с. 11–12; Т. К о ч а р л и. Необходимо уточнение.– Конфликты в Нагорном Карабахе. Сборник статей. Баку, 1990, с. 39.

Իրավիճակը Արցախում շատ ավելի բարդ և ողբերգական է եղել յոթերորդ համագումարի հրավիրման նախօրյակին և դրա ընթացքում: Ըստ էության՝ 1919 թ. մայիս–հուլիս ամիսներին անգլո-ազերիական դահիճների քաղաքականության հետևանքով Արցախ աշխարհը կանգնել էր կործանման եզրին: Այն փրկելու համար երկրամասի քաղաքական և հասարակական ուժերն օգտագործում էին բոլոր հնարավորությունները, նույնիսկ Բաքվում բանակցություններ են վարել Ադրբեջանի Հանրապետության ղեկավարության հետ՝ համաձայնության եզրեր որոնելու համար: Այդ վճռորոշ հարցին պատասխան կարող էր տալ միայն արցախահայության յոթերորդ համագումարը, որը տեղի է ունեցել 1919 թ. օգոստոսի 13–22-ը Շոշ գյուղում, չնայած Սուլթանովը նախօրոք պահանջել էր համագումարը հրավիրել Շուշի քաղաքում և իր ներկայությամբ լուծել Ղարաբաղի՝ Ադրբեջանի ենթակայության տակ դնելու հարցը: Սակայն Ազգային խորհուրդը մերժել է նրա պահանջը և որոշել Սուլթանովի ճնշումից հեռու գտնվելու համար համագումարը հրավիրել գավառում: Դրան մասնակցելու համար շրջաններից եկել էին 98 պատգամավոր: Ազգային խորհրդի 7 անդամներին տրվում է վճռական ձայնի իրավունք: Այսպիսով՝ համագումարն իր աշխատանքները սկսում է 105 պատգամավորի մասնակցությամբ: Համագումարի ընթացքում մասնակիցների թիվը հետզհետե ավելանում է: Այդ համագումարը, ըստ քարտուղար Ա. Կիսիբեկյանի բնորոշման, եղել է «զուտ անկուսակցական-համաժողովրդական համագումար», որի «աշխատանքների ընթացքում ոչ մի տարաձայնություն կամ կուսակցական վեճ գոյություն չուներ»[32]:

Արցախահայության յոթերորդ համագումարին անդրադարձել են հայ և թուրք մի շարք հեղինակներ: Թուրք հեղինակները միաբերան աղաղակում են, թե այդ համագումարը համաձայնվել է, որ Ղարաբաղը լինի Ադրբեջանի կազմում[33]: Հայ հեղինակներն էլ նշում են, որ, ելնելով այդ ժամանակ երկրամասի համար ստեղծված ծանր վիճակից, արցախահայությունը համաձայնվել է ժամանակավորապես, մինչև Փարիզի խաղաղության վեհաժողովի որոշումը, իրեն համարել Ադրբեջանի սահմաններում[34]:

Եվ,այսպես,համագումարը,քննարկելով Ղարաբաղի քաղաքական դրության հարցը, որոշում է Սուլթանովի՝ որպես մուսավաթական Ադրբեջանի պաշտոնական ներկայացուցչի հետ ստորագրել ժամանակավոր համաձայնագիր: Այն Արցախ-Ղարաբաղի անունից ստորագրել է համագումարի կողմից ընտրված պատվիրակությունը: Օգոստոսի 20-ին, հիշում է Ա. Կիսիբեկյանը, համագումարը Ազգային խորհրդին կցում է մի պատվիրակություն և ստեղծում 26 հոգուց բաղկացած հանձնաժողով, որն ուներ մեծ լիազորություններ: Համագումարը հանձնաժողովի վրա դրել էր շատ ծանր պարտավորություն՝ Շուշիում շարունակել բանակցությունները

[32] *Ա. Կ ի ս ի բ ե կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 377:*

[33] *Տե՛ս* Д. Г у л и е в. *Նշվ. աշխ., էջ 12,* Т. К о ч а р л и. *Նշվ. աշխ., էջ 39,* И. А л и е в. Нагорный Карабах. История. Факты. События. Баку, 1989, с. 78 *և այլն:*

[34] *Գ. Ա. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 116–117,* Л. А. Х у р ш у д я н. Истина–единственный критерий исторической науки. Ереван, 1989, с. 16; *Հ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 182, Հ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 149–158 և այլն:*

Ադրբեջանի կառավարության հետ: Օգոստոսի 21-ի առավոտյան դուրս գալով Շոշ գյուղից՝ պատվիրակությունը ճանապարհվում է Շուշի: «Թվով 26 ձիավոր,– գրում է Աբրամ Կիսիբեկյանը,– կարծես դատապարտյալներ՝ գլուխները կախած, հայացքները գետնին հառած, խորասուզված դառն մտքերի մեջ, այգիներով ցածրացան դեպի անդունդով հոսող գետը»[35]: Օգոստոսի 22-ին Շուշիում Ղարաբաղի հայության յոթերորդ - համագումարի անունից այդ հանձնաժողովը ստորագրում է 26 կետից բաղկացած ժամանակավոր համաձայնագիր, ըստ որի՝ Ղարաբաղի հայկական գավառները մինչև Փարիզի վեհաժողովի որոշումը «Ժամանակավորապես իրենց համարում են Ադրբեջանի հանրապետության սահմաններում» (կետ 1 և 2), «լեռնային հայկական շրջանում վարչությունը նշանակվում է հայերից» (կետ 3 և 4), «նահանգապետության կից կազմվում է խորհուրդ՝ վեց հոգուց բաղկացած՝ 3 հայ և 3 մուսուլման» (կետ 5), «խորհրդի հայ անդամներին ընտրում են Լեռնային Ղարաբաղի հայության համագումարում» (կետ 6), «ազգամիջյան բնույթի բոլոր սկզբունքային հարցերը չեն կարող կիրառվել կյանքում, առանց նախապես խորհրդի քննության ենթարկվելու» (կետ 7), «խորհուրդը իրավունք ունի հսկելու գեներալ-նահանգապետության վարչության գործունեությունը» (կետ 9), «հիմնվում է նահանգապետի օգնականի պաշտոն քաղաքացիական մասի վերաբերյալ, և այդ պաշտոնում նշանակվում է հայ» (կետ 10), Ղարաբաղի հայերը ստանում են «կուլտուրական ինքնորոշման իրավունք», որը «իրագործվում է Ղարաբաղի ազգային խորհրդի միջոցով» (կետ 12 և 13), «խաղաղ պայմաններում ռազմական զորամասերը տեղավորվում են Խանքենդում և Շուշիում» (կետ 15), «քաղաքական համոզմունքների համար ոչ ոք չի կարող ենթարկվել հալածանքի ոչ դատական և ոչ էլ վարչական կարգով» (կետ 17), «Ղարաբաղում հայ և թուրք բնակչության զինաթափումը դադարեցվում է մինչև Ղարաբաղի հարցի որոշելը խաղաղարար կոնֆերանսում» (կետ 19), երկրամասի բնակչությանը և միություններին տրվում է «խոսքի և մամուլի լիակատար ազատություն» (կետ 21), «մասնավոր և պաշտոնական անձանց յուրաքանչյուր հանցանք պետք է հետապնդվի դատական կարգով» (կետ 23) և այլն[36]:

Արցախահայության յոթերորդ համագումարի և Ադրբեջանի միջև կնքված ժամանակավոր համաձայնագրի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդի նախագահ և արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Խատիսյանը Փարիզի վեհաժողով ուղարկած բողոքում, շարադրելով վերջին մեկ տարում արցախահայության մղած ազատագրական պայքարի համառոտ պատմությունը, «ամենաբուռն կերպով բողոքում է Արցախի ազգաբնակչությունից կորզված» համաձայնության դեմ և հիշեցնում, որ «Արցախը ժամանակին կազմել է Հայաստանի անբաժան մասը»: Նա գրում է, որ «Արցախը աշխարհագրական կապերով կապված լինելով հայկական սարահարթին, կազմում է Հայաստանի բնական ամրոցը, առանց որի նրա հյուսիսային սահմանը կմնա անպաշտպան»[37]:

---

[35] *Ա. Կ ի ս ի բ ե կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 385:*

[36] *Տե՛ս նույն տեղում, էջ 391–393:*

[37] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50 (1 մաս), թ. 121: Շատ խոսուն է այն իրողությունը, որ մինչ այդ՝ 1919 թ. փետրվարին, ռուս անվանի գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ, հայասեր Ս. Գորոդեցկին իր «Ղարաբաղ» վերնագրով հոդվածում ահա նման որակումներով է բնորոշում երկրամասի նշանակությունը Հայաստանի համար. «Ազգագրական, տնտեսական և լեզվական առումով լինելով միասնական, Ղարաբաղը դարձել է Հայաստանի միջնաբերդը, նրա արևելյան թևը: Նա այդպիսին է եղել անցյալում, այդպիսին է հիմա, այդպիսին կլինի և միշտ, քանզի Հայաստանի սիրտը՝ Արարատյան դաշտը, չի կարելի պաշտպանել՝ չտիրելով Ղարաբաղին» (տե՛ս Ա ն. Զ ա ք ա ր յ ա ն. Սերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում, Երևան, 2010, էջ 110):*

Հետևապես՝ «Արցախի անջատումը Հայաստանից և նրա բռնակցումը մի այլ պետության, ամբողջովին հակասում է ազգերի ինքնորոշ սկզբունքին»: Մինիստր-նախարարը հույս է հայտնում, որ վեհաժողովը «իր մասնավոր և բարեհաճ ուշադրությանը կառնի Հայաստանի համար այնքան կենսական հանդիսացող Արցախի հարցը»[38]:

Հետհամագումարյան շրջանում Ադրբեջանի կառավարությունը բացահայտ քայլեր էր ձեռնարկում Արցախը հպատակեցնելու համար: Ստեղծված իրավիճակը քննարկվեց արցախահայության ութերորդ համագումարում, որը տեղի ունեցավ 1920 թ. փետրվարի 28-ից մարտի 5-ը, Շոշ գյուղում, չնայած Սուլթանովը, հասկանալի պատճառներով, դարձյալ պահանջել էր համագումարը հրավիրել Շուշի քաղաքում[39]: Այս համագումարը, նախորդների համեմատ, ուներ որոշ առանձնահատկություն. նախ՝ բոլշևիկ և էսէռ պատգամավորների մի մասը չգնաց համագումար և, մնալով Շուշիում, այստեղ կազմակերպեց խորհրդակցություն և որոշում ընդունեց՝ Արցախը թողնել Ադրբեջանի սահմաններում, չճանաչել Շոշ գյուղում տեղի ունեցած արցախահայության ութերորդ համագումարը և նրա ընդունած որոշումները: Պատգամավորական այդ խորհրդակցությունը նաև հավաստեց, որ Ղարաբաղը հանդիսանում է Ադրբեջանի տնտեսական մաս, և Հայաստանը չպետք է խառնվի Ղարաբաղի ներքին գործերին: Շոշ գյուղում տեղի ունեցող համագումարը, որին մասնակցում էին նաև բոլշևիկներ, էսէռներ և այլ կուսակցությունների ներկայացուցիչներ, ներկայացնում էր Գյուլիստանի, Ջիվանշիրի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի հայ բնակչությունը: Համագումարին մասնակցեցին նաև Հայաստանից եկած մի շարք ներկայացուցիչներ[40]: Համագումարը, քննարկելով Արցախի ներքաղաքական վիճակի վերաբերյալ հարցը, շեշտում է, որ Ադրբեջանի կառավարությունը պարբերաբար խախտել է «օգոստոսյան ժամանակավոր համաձայնության ամենագլխավոր կետերը»: Համագումարի մասնակիցները բողոքի ձայն էին բարձրացնում ի լուր քաղաքակիրթ աշխարհի՝ Ադրբեջանի հակահայ քաղաքականության դեմ և պահանջում էին դրա առաջն առնել: Համագումարից հետո ավելի խորացավ հակամարտությունը Ադրբեջանի և Ղարաբաղի միջև. Ադրբեջանն իր ձեռքերն արձակված համարելով՝ սկսեց տենդագին նախապատրաստվել Արցախը բռնի ուժով իրեն ենթարկելու համար:

Արցախահայության ութերորդ համագումարի օրերին առաջին անգամ ի հայտ եկան երկրամասի քաղաքական ուժերի նկրտումները:Բոլշևիկները գտնում

---

[38] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50 (1 մաս), թ. 121–124:*
[39] *Հ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 206:*
[40] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 29:*

էին,որ արցախահայության փրկության միակ ելքը օգոստոսյան ժամանակավոր համաձայնագրի պահպանումն է, իսկ դաշնակցական կուսակցությունը և քաղաքական մյուս ուժերը, երկրամասի մտավորականության զգալի մասն ու ողջ գյուղացիությունն էլ գտնում էին, որ երկրամասի հայության փրկության միակ ելքը մայր Հայաստանի հետ վերամիավորումն է՝թեկուզ զինված պայքարի միջոցով:

Ադրբեջանն անցնելով արագ ու կտրուկ գործողությունների՝ Արցախ աշխարհը ողողեց արյան մեջ և Անդրկովկասում երբեմնի հռչակ վայելած Շուշին վերածեց մոխրի:

Արցախահայության հաջորդ՝ իններորդ համագումարը հրավիրվել է 1920 թ. ապրիլի 25-ին Վարանդայի Ներքին Թաղավարդ գյուղում, բայց արդեն բոլորովին նոր իրավիճակում. հայկական զորամասերը Դրոյի հրամանատարությամբ մտել էին Արցախ ու երկրամասը հայտարարել Հայաստանի հետ միավորված: Ժողովրդավարական այդ համագումարը միաձայն ընդունեց հետևյալ որոշումը. 1. չեղյալ հայտարարել արցախահայության յոթերորդ համագումարի անունից Ադրբեջանի կառավարության հետ կնքված ժամանակավոր համաձայնագիրը՝ ելնելով այն բանից, որ այն խախտվել է Ադրբեջանի զորքերի կողմից Շուշիում և գյուղերում հայ բնակչության դեմ կազմակերպված հարձակմամբ, 2. հռչակել Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի Հանրապետությանը, որպես նրա անբաժան մաս, 3. խնդրել Հայաստանի Հանրապետության՝ Մոսկվայում գտնվող պատվիրակությանը՝ համագումարի որոշման մասին հայտնել Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը[41]:

1920 թ. մայիսի երկրորդ տասնօրյակի սկզբին Խորհրդային Ռուսաստանի 11-րդ - կարմիր բանակի զորամասերը մտնելով Արցախ-Ղարաբաղ՝ այն հայտարարում են խորհրդային: Կարմիր բանակի հրամանատարության ճնշման տակ Դրոն մայիսի 25-ին իր զորամասերով հեռանում է Սյունիք: Հաջորդ օրը Վարանդայի Ներքին Թաղավարդ գյուղում հրավիրվում է արցախահայության տասներորդ համագումարը, որի պատգամավորների մեծամասնությունը բոլշևիկներ էին: Համագումարը որոշում է. 1. Լեռնային Ղարաբաղը հայտարարել խորհրդային, 2. ստեղծել հեղկոմ, 3. հեղկոմի նախագահ ընտրել Սաքո Համբարձումյանին և 4. կապ հաստատել Շուշիի հեղկոմի հետ[42]:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ արձանագրենք. համաշխարհային պատմության մեջ եզակի երևույթ է, երբ մի երկրամաս շուրջ երկու տարի կառավարվել է ժողովրդական համագումարների կողմից:

Արցախի պառլամենտը այլ երկրների պառլամենտներից տարբերվում էր մի շարք յուրահատկություններով. Երկրամասը բաժանված էր 22 հասարակական համայնքի,որտեղից ընտրվում էին հավասար քանակությամբ պատգամավորներ: Քվեաթերթիկներ չկային. հասարակական համայնքի մեջ մտնող գյուղերի ներկայացուցիչները հավաքվում էին համայնքի կենտրոնում, որտեղ էլ բաց քվեարկությամբ ընտրում էին պատգամավորներ, այսինքն՝պառլամենտ ի անդամներ: Պատգամավորների

---

[41] *Նույն տեղում, թ. 98:*

[42] *Համագումարի ընդունած որոշման պատճեն տողերիս հեղինակի մոտ է:*

ճնշող մեծամասնությունը գյուղացիներ էին, մտավորականներ, առևտրականներ, կուսակցությունների ներկայացուցիչներ: Կուսակցությունները, որոնք, անկախ իրենց անդամների թվից, կարող էին համագումար ուղարկել երկուական կամ երեքական պատգամավոր, ինչպես որ հրահանգվում էր: Արցախի պառլամենտի բոլոր պատգամավորները ազգությամբ հայ էին: Այլազգիները չէին մասնակցում պառլամենտի աշխատանքներին: Արցախում համագումարն էր ընտրում կառավարության նախագահ և կառավարիչներ (նախարարներ), նախագահը միաժամանակ կարող էր կառավարել մեկ կամ երկու նախարարություն: Համագումարն ընտրում էր նաև ազգային խորհուրդ, որը հետագայում իրագործելու էր կառավարչական գործառույթներ:

Ահա թե ինչպես դրսևորվեց արցախահայության համագումարների ժողովրդավարությունը 1918–1920 թվականներին:

ДЕМОКРАТИЯ СЪЕЗДОВ АРЦАХСКИХ АРМЯЎН В 1918–1920 ГГ.

ГРАНТ АБРААМЯН

Резюме

В 1918–1920 гг. состоялось 10 съездов арцахских армян, которые фактически управляли краем, осуществляя как законодательную, так и исполнительную власть, что является уникальным явлением в мировой истории. Эти съезды выполняли роль парламента Арцаха, который отличался от других парламентов следующими особенностями: вся территория была разделена на 22 общины, которые избирали одинаковое количество депутатов, независимо от количества населения, не было избирательных бюллетеней – представители общин собирались в центре общины, открытым голосованием избирали депутата парламента. Подавляющее большинство депутатов были сельчане, интеллигенция, торговцы, представители политических партий. Пять политических партий делегировали одинаковое количество представителей, все члены парламента Арцаха были армянами, представители других наций, особенно, мусульмане не участвовали в парламенте и пытались сорвать его работу. Парламент выбрал председателя правительства и министров. Кроме съезда, состоявшегося в августе 1919 г., который постановил заключить временный договор с Республикой Азербайджан, пока Парижская мирная конференция решила бы арцахский вопрос, на всех остальных съездах было решено воссоединиться с Арменией-матерью.

`

DEMOCRACY OF THE CONGRESSES OF THE ARTSAKH ARMENIANS
IN 1918–1920

HRANT ABRAHAMYAN

S u m m a r y

In 1918–1920 Armenians of Artsakh held 10 Congresses. These bodies de facto governed the land, they exercised both legislative and executive power thus representing the very unique phenomenon in the World History. These Congresses acted as the Artsakh Parliament and were distinct from the other legislative bodies in the following ways: the whole territory was divided into 22 communities with the equal number of elected deputies without reference to the population size. There were no voting bulletins, representatives of community were meeting in the centre of locality instead and elected their member of Parliament by open ballot. In the overwhelming majority, these deputies were peasants, intellectuals, merchants, representatives of the political parties. Five political parties delegated equal number of representatives into the Parliament of Artsakh where all members were Armenians. Representatives of other nationalities, Moslems in particular, did not participate in legislation and made attempts to derange its work. The parliament elected Chairman of the Government and Ministers. With the exception of the Congress, held in August, 1919, which resolved to conclude a temporary agreement with the Republic of Azerbaijan until further arrangement of the Artsakh problem by the Paris Peace Conference, all the other Congresses did adopt the decision to reunite with Armenia as a genuine Motherland.